Արձանագրություն N 2

ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով հայտարարված Ծաղկաձոր համայնքի կարիքների համար համայնքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք.Ծաղկաձոր 04 մայիս 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գ.Հայրապետյան/ԳԱՊ/

անդամներ՝ Ն.Խաչատրյան /ԲԱ /

Վ.Հայրապետյան /ԲԱ/

Է.Հովհաննիսյան /ԳԱ/

Ա.Մեսրոպյան /ԳԱ /

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

1. Տեղեկություններ ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի մայիսի 04-ին, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարան, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Գ.Հայրապետյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ
2	<<Երևաննախագիծ>> ՓԲԸ

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
<<Մեծ Մասրենի>> ՍՊԸ	Բավարար
<<Երևաննախագիծ>> ՓԲԸ	Բավարար

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Գ.Հայրապետյան)

4.1 Գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Չափաբաժին	Նախահաշվային գին	Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Առաջարկված գինը
1. Ծաղկածոր համայնքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներ	**8000000**	<<Մեծ Մասրենի >> ՍՊԸ	7300000 /յոթ միլիոն երեք հարյուր հազար/	-	7300000 /յոթ միլիոն երեք հարյուր հազար/
		<<Երևան նախագիծ >> ՓԲԸ	6333333 /վեց միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք/	1266667 /մեկ միլիոն երկու հարյուր վաթսուն վեց հազար վեց հարյուր վաթսունյոթ/	7600000 /յոթ միլիոն վեց հարյուր հազար/

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

5. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ <<ԾՔ-ԳՀԱՇՁԲ-18/8>> ծածկագրով գնման ընթացակարգի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային

առաջարկ ներկայացրած մասնակից: 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել <<Մեծ Մասրենի>> ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ հարցում կատարել ՀՀ ԿԱ Պետական Եկամուտների Կոմիտե, ինչպես նաև նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում հրապարկելու օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման համար :

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը,ժամը և վայրը հաստատելու մասին

(Գ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված հարցման պատասխանի ստացմանը հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, Ծաղկաձորի համայնքապետարանի վարչական շենքում, ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ----------Գ.Հայրապետյան

անդամներ՝ ----------Ն.Խաչատրյան

---------- Վ.Հայրապետյան

----------Է.Հովհաննիսյան

---------- Ա.Մեսրոպյան

քարտուղար՝----------Ա.Ավետիսյան